մոքսերի կատարեալ աղատութիւն չէին ստացած և որոնք մէկից մինչև չորս կարող էին բարձրանալ, մինչդեռ երկրորդ տեսակ հարկերը բոլոր աղգերի համար պարտաւորական էին, մի և նոյն չափով։

(Կը-ր-ն-ի-ի։) ՀԵՌ Ե. Գ-Ն ԷՔ Ց. Պ.

ՑԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴ։

Նա ծնվեցաւ ոչ մարմարում՝ և ոչ ոսկում՝,
Նորա շուրջ չէր տօնախմբում՝ ճոխ արքունիք։
Աստուածներին պարարտ զոհեր չէին զենվում՝,
Եւ չէր թնդում՝ վարձկանների խումբ երգեցիկ։
Բայց երկնքի և երկրի մէջ խաղաղութիւն
Հանդիսաբար կատարվեցաւ այն ժամանակ։
Եւ երկնքում՝ ոգիների ձայներգութիւն
Հընչում էր՝ երբ ծագեց մեզ լոյս՝ նոր արեգակ . . .
Այն օրից նա վառված է միշտ և չէ հանգչում՝,
Թէև թխպոտ ամպով երբեմն նա ծածկվում է։
Բայց այն ամպերն կեանքի մրրիկն է հեռացնում՝,
Եւ շարունակ առաջվան պէս նա փայլում է։
Աստուածային ճշմարտութեան է նա վառ կրակ՝,
Եւ լաւագոյն հոգիների սուրբ ցանկութիւն։
Ապագայի մշտածաւալ է նա գիշակ՝,
Երջանկութեան չթառամող ծաղիկ սիրուն։
Ուրեմն եղիր մեզ ճանապարհ ցոյց տուող աստղիկ՝,
Ինչպէս որ մոգ—արքաներին երբեմն էիր՝,
Եւ տար մեզ դու դէպ աղնիւ գործ և գեղեցիկ։
Տգիտութեան՝ չարութեան դէմ՝ մեզ միշտ վառիր՝։

Իշխան Բագրատունի։

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

«Արարատի» ներկայ տետրակը ուշացաւ՝ որի պատճառը խմբագրողի առժամանակեայ բացակայութիւնն էր՝ և որ կ՚յուսանք ներեն ընթերցողները։ Խմբագրութիւնս ջանալու է՝ Վ.Հ. Հայրապետի ցանկութեան համեմատ՝ ամսագիրը իւր ժամանակին հրատարակել։

Վ.Հ. Կաթողիկոսի հրամանով Խորէն Վ. Ստեփանէն գնացած էր Թիֆլիս կարևոր պաշտօնով — յօգուտ Գ. Ճեմարանի Ննջարանի շինութեան նուէրներ հանդանակելու։ Աստուծու ողորմութեամբ՝ Վ.Հ. Հայրապետի սուրբ օրհնութեամբ և աղօթքով՝ Թիֆլիսի պատուական և հայրենասէր քաղաքացիների Պ. Ա. Ղ.օրղանեանի՝ Պ. Ց. Զիլթախեանի՝ Պ. Ա. Ման-

թաշեանի և Պ. Ա. Յովհաննիսեանու օգնութեամբ և գործակցութեամբ, Խորէն վարդապետը կարողացաւ դժուար գործը յաջողեցնել և շնայելով բազմատեսակ բնական և արհեստական արգելքներին, աշխատեց, որ Թիֆլիս քաղաքը իւր անունին վայել մասն ունենայ ճեմարանի ննջարանի շինութեան մէջ, որը ձեռնարկած է ազգաշէն մեծ Հայրապետը։

Փառք և պատիւ Թիֆլիսի Էջմիածնասէր ժողովրդին, որը շնայելով Թիֆլիսի դժուար երևակայելի թանկութեանը և ուրիշ արգելքներին, որոնց մասին ընթերցողն երևի ունի մասնաւոր տեղեկութիւն, նշանաւոր գումար նուիրեց Էջմիածնի ճեմարանին։

Խորէն վարդապետը բոլոր իւր կեանքում խորին յարգանքով և շնորհակալութեամբ պիտի յիշէ մեծապատիւ Անտոն Ղօրղանեանի, Յովհաննէս Զիթախեանի, Ալեքսանդր Մանթաշեանի և Արդար Յովհաննիսեանու անունները, որոնք ի յարգանս ազգասէր Հայրապետի իւրեան գործակից եղան, իւրեանք ևս նշանաւոր գումարներ նուիրելով։ Արդարև անկեղծ և անսուտ Հայի սրտում կայ անշուշտ մի մշտարորբոք տենչիւն Էջմիածնի համար, որի ճանապարհ գտնողը պիտի արդիւնաւորեն անշուշտ իւր գործը, որքան դժուար ևս լինէր և արգելքներ շարված լինէին։ Առանց վառ և բորբոք սէր ունենալու առ Մայր Աթոռն Սուրբ Էջմիածին, հայկեան տունն փրկութեան, կարելի է մի՞թէ ամենայն յօժարութեամբ նուիրել հետևեալ գումարները։ Պ. Անտոն Ղօրղանեանը նուիրեց 1000 մ., Յովհաննէս Զիթախեանը — 1000 մ., Ալեքսանդր Մանթաշեանը — 600 մ., Եսայի Փիթոյեանը — 500 մ., Գրիգոր Շիթոյեանը — 300 մ., Ալեքսանդր Թայիրեանը (Երևանցին) 300 մ., Յովհաննիսեանին (հայր և որդին) — 300 մ., Ալեքսանդր Մելիք Աղարեանը — 300 մ., Յովհաննէս Էմինեանը — 300 մ., Յովանեաններն — 250 մ., Յարութիւն Քարտաշեանը — 237 մ. և այլն և այլն, որոնց ցուցակը յարմար միջոցին հրատարակվելու է ի հարկէ։ Սրբա անկասկած զգալի ապացոյցներ են նուիրողների խորին և ջերմ սէրի և համակրութեան առ Մայր Աթոռն և Վեհ. Աթոռակալի ազգաշէն գործունէութիւնը։

Խորէն վարդապետը վերադարձաւ Ս. Էջմիածին յունվարի 27-ին, ներկայացնելով Սինոդին Թիֆլիսում հանգանակած 10,389 մ. գումարից 5629 մ., չհաշուելով ճանապարհածախսը, իսկ մեծ. Պ. Զիթախեանի մնացած է 4452 մ. 29 կ. ննջարանի շինութեան համար զանազան պարագաներ գնելու և ուղարկելու։ Այլև Թիֆլիսի արժ. քահանաները, բացի ամենայն մասնաւոր գումար հանգանակեցին, որով աշակերտական դրամարանի համար գրքեր գնվեցան։ Նոյնպէս մասնաւոր գումար ժողովվեցաւ աշակերտների ժամաշապիկների համար, որի ամբողջ քանակը յայտնի չէ, որովհետև մասամբ դեռ ևս պիտի ստացվի։ Այլև Թիֆլիսի վիճակային տեսանի արժ. անդամներ — Արիստակէս ա. ք. Բէնքլեանը, Գէորգ ա. ք. Թէմուրազեանը և Սարգիս ա. ք. Աղաջանեանը, բացի քահանայական ստորագրութեանը մասնակցելուց, նուիրեցին ճեմարանի համար 12 հատ վէնական ընտիր աթոռներ, որի համար առանձնապէս խնդրած

էր Խորէն վարդապետը։ Վիճակային տեսանի արժ. անդամների և նոցա պարագլուխ — նախանդամ դեր. Մամբրէ վարդապետ Սանասարեանի համակրութիւնը քաղցրութեամբ յիշատակելի է։

Վեհափառ Հայրապետը տեսնելով այս բոլորը մխիթարվեցաւ և աղօթելով հայկական ազգի բարեբաղդութեան համար։ օրհնեց ամենքին իւր Հայրապետական օրհնութեամբ։ օրհնեց և իւր հոգևոր որդուն — Խորէն վարդապետին։ որը շատ աշխատեց Թիֆլիսում։

Չէ կարելի առանց խորին շնորհակալութեամբ յիշելու թողնել արժ. Գէորգ քահանայ Աբուլեանին (Աւետեաց եկեղեցու Փարանին)։ որն առանձին իմն բարեսիրութիւն և հայրապետասիրութիւն ցոյց տուեց բոլոր միջոցին։

Թիֆլիսի ժողովրդին Վեհ. Տէրը բարեհաճեց յատուկ օրհնութեան կոնդակ ուղարկել առաջնորդի անունով։ որ պիտի կարդացվի Թիֆլիսի եկեղեցիներում ժողովրդի առաջ։ որով օրհնելով Թիֆլիսի բարեպաշտ ժողովուրդը։ Վեհ. Տէրը կմաղթէ երկնային Շնորհատուից ամենայն բարիքներ առատացնել նոցա վերայ։

Այլև Վեհ. Հայրապետը բարեհաճեց օրհնութեան առանձին կոնդակներ շնորհել մասնաժողովի մեծ. անդամներին։ նոյնպէս և այն անձներին։ որոնք առանձին համակրութիւն ցոյց տուին Մայր Աթոռին Վեհ. Հայրապետի հրաւէրով նշանաւոր գումարներ նուիրելով։

Թիֆլիսի հոգևորական դասից Վեհ. Հայրապետը բարեհաճեց վարձատրել Արիստակէս ա. ք. Բէնքլեանին խաչով։ Գէորգ ք. Աբուլեանին կամիլավկայով և Եսայի ք. Տէր Նիկողոսեանին խաչով առ Մ. Աթոռն ցոյց տուած իւրեանց համակրութեան և ծառայութեան և Վեհ. Հայրապետի նուիրակին ընձեռած գործակցութեան համար։

Երբ մարդիկ կմիանան բարի և ազգօգուտ գործը յառաջացնելու համար։ Աստուած ևս։ որը մի է և միութեան Հայր։ միացած կլինի նոցա հետ և յաջողեցնելու է նոցա զժուարագոյն գործը և գործի յաջողելուց յետոյ ևս Աստուածային օրհնութիւնը մնալու է նոցա վերայ։ Ամենայն անկեղծ և հայրենասէր Հայն։ ստանալով տասնևհինգ դարերի արիւնով նահատակված Հայաստանի սուրբ եկեղեցու ազգաշէն Հայրապետի և ընդհանուր հայկեան ազգի Վեհափառ Կաթողիկոսի Տեառնաւանդ օրհնութիւնը և հայրագութ սէրը Աստուածային շնորհի նշաններ կհամարէ և վերստին կծնվի Ս. Էջմիածնի համար։ որի անուն տալիս ամենայն անսուտ Հայի սիրտը կբարախէ։ որը հին և նոր հայութեան կենդանութեան որորան է։ որը միութեան հզօր տարը եղած է և պիտի լինի յաւիտեան հիւսիսային Նէվայի և Վօլգայի Հայերի — հարաւային Քուռի և Բասֆորի Հայերի հետ։ հեռաւոր Գանգէսի և Նեղոսի Հայերի—Դանուբի և Եփրատի Հայերի հետ և ամենայն Հայերի—մայր Արարատի Հայերի հետ։

Այս անգամ այսքան ասելով այս առարկայի մասին։ կցանկայի կրկին և կրկին կրկնել. փառք և պատիւ Թիֆլիսի հայրենասէր։ Էջմիածնասէր և հայրապետասէր Հայերին։

* * *

Սրտամաշ ցաւով պիտի յիշենք Հայաստանի մէջ տիրած սովը, գլխաւորապէս Վանի և շրջակայ տեղերի։ Վեհափառ Հայրապետը բարեհաճեց յատուկ գրութիւններով յորդորել Պէտէրբուրգի, Մոսկվայի, Աստրախանի, Նոր-Նախիջևանի և Թիֆլիսի Հայերին և կհրաւիրէ ամեն զգայուն Հայերին օգնել մեր թշուառ եղբայրներին, որոնք դարերով սրած թրերին դիմանալով, սովամահի զոհ պիտի դնան, եթէ մենք անկարեկից մնանք։ Վեհ. Հայրապետը կհրաւիրէ հայասէր երիտասարդներին բաւականանալ խօսքերով և դէպ ի գործ անցնել, այն է. կազմել ամեն տեղ մասնաժողովներ և անմիջապէս հանգանակութիւն սկսել։ Մայր Աթոռը կցաւի, որ մի տարվան և քանի մի ամսական պաշար հազիւ ունենալով, չէ կարող ինքն անմիջական նպաստ հասցնել, որովհետև այնուհետև ստիպված կլինէր փակել թէ Մ. Աթոռը և թէ ճեմարանը, ուստի թախանձելով և խնդրելով կխնդրէ իւր հոգևոր զաւակներին, որ լսեն իւրեանց հեռաւոր եղբայրների աղետալի թշուառութեան աղիողորմ աղաչանքը, որ սրտամաշ և կսկծեցուցիչ է Մայր Աթոռիս համար։ Հոգեկան մխիթարութեամբ իմացաւ Վեհ. Հայրապետը, որ պատուական հայազն մեծ. Պ. Մկրտիչ Սանասարեանը, որի ձախ ձեռը, Աւետարանի խօսքով, չգիտէ ինչ կգործէ աջ ձեռը բարեգործութեան մէջ, նուիրած է յօգուտ Վանի սովածների 1500 մ. և կօրհնէ նորան և կմաղթէ երկնային Պարգևատուից բիւրապատիկ շնորհներ պարգևել նորան։

Էջմիածնում մասնաւոր ստորագրութեամբ, որը յանձն առած էր ցանկացողներին առաջարկել ճեմարանի ուսուցիչ Պ. Կոստանեանն և որին իսկարկէ մասնակցեցին ճեմարանի բոլոր ուսուցիչները, ժողովվեցաւ 300 մ., որ և ուղարկվեցաւ Վան։

* * *

Պէտէրբուրգում բնակող մի հայասէր և պատուական Հայն, որին այս ամառն Խորէն վարդապետը չէր տեսել այնտեղ, արտասահմանում լինելուն պատճառով և որին թողած էր նամակը Վեհ. Հայրապետի ձեռնարկած գործին մասնակցութեանը հրաւիրելով, ուղարկած է Խորէն վարդապետին երկու հարիւր մանէթ յօգուտ Գ. ճեմարանի ննջարանի շինութեան։ «Արարատը» կգովէ նորա հայրենասէր զգացմունքը։ Յիշված երկու հարիւր մանէթը ներկայացվեցան Սինոդին Ռուսիայում հանգանակած 9564 մ. գումարի հետ նշանակվելու, որի բովանդակը սորանով կդասնայ 9764 մ։

* * *

Խորին շնորհակալութեամբ պարտք կհամարինք յիշել և գովել յօգուտ Գ. ճեմարանի արած հետևեալ ընծաները։

Մեծ. Պ. Սանասարեանն ընծայած է նկարչութեան համար բռնայ (գաջի) ամբողջ արձաններ, կիսարձաններ և այլն։ Այլև զանազան պարագաներ իւղաներկեր, կարկիններ, մատիտներ և այլն և այլն։ Պէտէրբուրգից մեծապատիւ Պ. Եզեանն ընծայած է հայերէն երկու պատմաբանական գրքեր,

բնական երևոյթների 4 հատ պատկերներ և 12 հատ պատմագրական պատկերներ։ Մոսկվայից Յարութիւն քահանայ Պոպովեան ընծայած է իւր յօրինած հին կտակարանի պատմութիւն 25 օրինակ։ Պետերբուրգից մեծ. Պ. Յովսէփ Իզմիրեանն ընծայած է 15 օրինակ զանազան հայերէն գրքեր։

Նուիրատու պատուական անձներն իւրեանց նուէրներով ցոյց կտան ի հարկէ թէ կզգան Գ. Ճեմարանի նշանակութիւնը և կարևորութիւնը և համակրելով նորան կցանկան նորա յառաջադիմութիւնը։ որի համար անկեղծ շնորհակալութիւններ կմատուցանենք։ Ի դէպ կհամարինք առաջարկել և խնդրել հայազն հեղինակներին իւրեանց համար անզգալի նուէր անել այսուհետև իւրեանց հեղինակութիւնների մի օրինակ Ճեմարանի և մի օրինակ Մայր Աթոռի մատենադարաններին թէ լրագիրներ թէ գրքեր և թէ առհասարակ որտեղ ինչ որ հրատարակվելու է։ Նախ սորանով օժանդակած պիտի լինին կարևոր հարուստ հայկական մատենադարան կազմելուն։ և երկրորդ մի հաստատուն մնայուն տեղ պիտի որոշվի ամենայն հայերէն հեղինակութիւններն ժողովելու։ մինչդեռ քանի մի տարի առաջ։ չասենք շատ հեռու։ Թիֆլիսում հայերէն հրատարակված Կովկաս լրագիրն։ օրինակ։ դժուար թէ որևիցէ տեղ կգտնէ ցանկացողը։ այլ Էջմիածնի մատենադարանում ամենայն հրատարակութիւնները կարող են պահպանված լինել միշտ։ Կյուսանք որ հայազն հեղինակներն համակրելու են այս օգտաւէտ առաջարկութեանը և խնայելու չեն իւրեանց հեղինակութեան երկու օրինակը ընդհանուր ազգային մատենադարան մի հիմնելու և կազմելու համար։ Թող յուսանք որ հայկական պարբերական հրատարակութիւնները համակրութեամբ արտատպելու են այս օգտաւէտ առաջարկութիւնը և իւրեանք գործակից լինելու են այս գրականական արժէք ունեցող գործին։ որ ապագայ սերունդը պիտի գնահատէ անշուշտ։ Ուղարկելի գրքերն։ առաւել ապահովութեան համար։ Վեհ. Հայրապետը բարեհաճեց թոյլատրել Իւր անունով ուղարկել։ նշանակելով ծրարի վերայ. «Մայր Աթոռի կամ Ճեմարանի մատենադարանի համար։»

* * *

Ախալքալաքի գաւառի Օրգայ գիւղի բնակչուհի Մարիամ Յովհաննիսեանը նուիրած է Ս. Էջմիածնին իւր վաստակներից 20 ման։ Նուիրատու կնոջ բաղձանքը կկատարենք հրատարակելով ամնադրումն նորա բարեպաշտական նուէրը։

* * *

Նոր-Զուղայից տեղեկութիւն ստացանք։ որ Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդ գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոսը Հնդկաստանից վերադառնալով հասել է Զուղայ և սիրալիր ընդունելութիւն գտած է իւր ժողովրդից։ Իւր հեռաւոր հօտին այցելելու համար քանի մի տարվան բացակայութենից վերադարձող առաջնորդին մեծ յարգանքով ընդառաջ դնացած է ժողովրդի բազմութիւնը։ Յիսուսի Ս. ծննդի տօնին գեր. առաջնորդը ս. պատարագ մատուցանելուց յետոյ շրջելով ժողովրդի

տները մխիթարած է նոցա և մխիթարվել է ինքն՝ սէր և պատիւ վայելելով ժողովրդից։ Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոսի թէ Հնդկաստանից մեկնվելիս և թէ Ջուղայում ընդունվելիս ստացած յարգանքը և համակրութիւնը սխալ կհանեն հարկաւ ոմանց անբարեացակամ գրութիւններն՝ որոնք քանի մի անձների կիրքերի գործ լինելով՝ կցաւեցնէին անկասկած աշխատաւոր սիրտը։ Մինչդեռ գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոսը հեռաւոր տեղերում երկար շրջեց և ապարդիւն չէր նորա շրջագայութիւնն՝ այլ շատ կողմերից արդիւնաւոր։ Վաղուց Հնդկաստանի Հայերի մէջ չէր յիշատակված Էջմիածնի անունը վայելուչ կերպով՝ վաղուց Հնդկաստանի Հայերը չէին ընդունած Հայրապետի ծայրագոյն նուիրակը՝ և նորա բերանով Հայրապետական օրհնութիւնը և բարեմաղթութիւնները։ Մինչդեռ քանի որ Հնդկաստանի Հայերը բազմահոչակ հարուստներ էին՝ նուիրակներն ևս անպակաս կլինէին։ Վեհ. Կաթողիկոսի պատուէրով գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոսը երկար շրջագայելով Ս. Էջմիածնի հեռաւոր գաւակների մէջ՝ կայցնէր Վեհափառ Հայրապետի մտքերը թէ Մայր Աթոռը ոչ միայն ընդհանուր հարստութիւն տիրած միջոցին՝ այլ ամեն ժամանակ կյիշէ և կցանկայ հոգևորապէս մխիթարել իւր զաւակներին։ Սորա համար քանիցս գրութեամբ յայտնեցին իւրեանց շնորհակալութիւնը Հնդկաստանի Հայերը Վեհափառ Կաթողիկոսին՝ որ կմխիթարվէր գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոսի հովուական գործունէութեամբ և կօրհնէր նորան և իւր հօտը։

Այս անգամ ընտիր և պատուական ընծայ ուղարկված է Հնդկաստանից ի վայելումն Վեհ. Հայրապետին՝ որ նուիրած է մեծանուն հայազն հարուստ Պ. Ալեքսանդր Արգարեանը Ս. Էջմիածնին։ Հովուական գաւազանը կորագլուխ արծաթեայ է՝ գլուխն ամբողջ ոսկեզօծ է՝ ծաղիկների սաղարթաձև տերևներով զարդարված՝ իսկ բունը արծաթեայ ութանկիւնի է՝ ունի չորս խնձոր ոսկեզօծ՝ նոյնպէս և վարի ծայրն ևս։ Բունի վերին ծայրում հետևեալ եօթն տող յիշատակագիր է փորագրված. «Ի յիշատակ հանգուցեալ ծնողաց իւրոց Պ. Յարութիւնի Արգարեան հիմնադրի ընկերութեան Արգարեան ի Կալկաթա՝ և Կատարինէ տիկնոջն նուիրէ Պ. Աղեքսանդր Յ. Արգարեան՝ առ Սուրբ Էջմիածին ի վայելումն Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց՝ ձեռամբ Գրիգորիս Արքեպիսկոպոսի Ջուղայի և Ծ. նուիրակի ի Ս. Էջմիածին. 1878. փետրվարի 1. ի Կալկաթա։»

Վեհ. Հայրապետը ստանալով այս գեղեցիկ և թանկագին նուէրը օրհնեց պատուական և բարեպաշտ նուիրողին յատուկ օրհնութեան կոնդակով։

* * *

Փետրվարի սկզբում վախճանեցաւ՝ 54 տարեկան հասակում՝ Աբրահամ վարդապետ Սարգսեանը Մողնու վանքի վանահայրն՝ որ եկած էր Ս. Էջմիածին 1875 թ. Ջուղայի Ամենափրկիչ վանքի միաբանութենից՝ նոյն վանքում պատահած ինչ ինչ անհամաձայնութեան պատճառով՝ և գալով Էջմիածին Վեհ. Կաթողիկոսին խնդրագիր տալով ընդունված է Մայր Աթոռիս

միաբանութեան կարգում։ Այնուհետև Աբրահամ վարդապետն առանձին հնազանդութեամբ և հպատակութեամբ Վեհափառ Հայրապետին և հաւատարմութեամբ կատարեց Մայր Աթոռի մէջ յանձնած պաշտօնները։ Թէև տկարութենից ազատ չէր։ Անցեալ տարի Վեհ. Տէրը բարեհաճեց նորան Մողնու վանահայր կարգել։ որտեղ և մեռաւ փետրվարի 3ին։ Վեհափառ Հայրապետն ի յարգանս նորա հնազանդ և հաւատարիմ պաշտօնավարութեան և ապագայի յոյսերի։ ուղարկեց Մողնու վանքը Էջմիածնից գեր. Մեսրոբ Եպիսկոպոսին և մի վարդապետ։ պատուիրելով շրջակայ գիւղերից եւս քահանաներ կանչել և վայելուչ պատուով և հանդէսով ամփոփել հանգուցեալ Աբրահամ վարդապետի մարմինը։

***

Կողբ գիւղից պ. Միրիջանեանը կհաղորդէ խմբագրութեանս։ որ այնտեղ շինվել է։ Վեհ. Հայրապետի տնօրէնութեան համաձայն։ ծխական դպրոցը տեղական ժողովրդի ծախսով։ Դպրոցի մասին առանձնապէս աշխատել է տեղական Արգար քահանան։ Ուսումն արդէն սկսվել է 1879 թ. վերջում և 40 աշակերտներ կան։ Ուսուցիչն է Գր. Փիրումեանը։ Հոգաբարձուները պիտի ընտրվէին և հաստատվէին Վեհ. Հայրապետից։ Կրթեմաղթենք դպրոցին մարդավարի յառաջադիմութիւն։

***

Վեհ. Հայրապետին մատուցված յայտարարութեան մէջ Ռուսիայում նուէրներ հանգանակելու մասին Խորէն Վ. Ստեփանէի հետ Նիժնու տօնավաճառում շրջող սարկաւագի սխալմամբ հրատարակված անունը կցանկանք ուղղել։ Սարկաւագի անունը Բաղդասար չէ։ այլ Ղազարոս Ս. Բեգնազարեան (Աստրախանից)։

***

Նոր Նախիջևանի Մարդասիրական ընկերութեան 1878 թ. հաշիւը ստացանք։ Մ. ընկեր. 1878 թուին ունեցել է մուտքը 2084 մ. 47 կ.։ ծախսը 1841 մ. 70 կ։ 1879 թուի սկզբում Մ. ընկերութեան գրամագլուխն եղել է 9464 մ։ 14 կ։ Անդամների թիւն է. Աշանջենաւորներին — 26։ Նախանձաւորներին — 15։ Տարեկաններին — 185։

***

Կ. Պոլսի Պատրիարք Սրբազան Ներսէս Արքեպիսկոպոսն հոգու բերկրութեամբ հաղորդած է Վեհափառ Հայրապետին նոյեմբերի 9ին արժ. Մաղաքիա Վ. Օրմանեանի եւ իւր երեսուն եւ չորս բարեկամների իւրեանց ընտանիքներով միութիւնը Հայաստանի առաքելական սուրբ եկեղեցու հետ։ Այլև խնդրած է Հայրապետական օրհնութեամբ օրհնել Մաղաքիա վարդապետին և բոլոր նորոգ միացածներին։

Սրբ. Պատրիարքն իւր գրութեան հետ մատուցած է Վեհ. Տեառն և Մաղաքիայ Օրմանեանի հպատակական գիրը։ որով արժ. հայրը կուխտէ հոգով և մարմնով։ գործով և խօսքով։ սէրով եւ փափագով։ հաւատով և վարդապետութեամբ Հայ լինել եւ հայապէս քաղաքավարել։ առ որ

թախանձելով կինդրէ Վեհափառ Հայրապետի Ցեառնաւանդ օրհնութիւնը։ Սրբ. Պատրիարքն ուղարկած է նոյնպէս Մաղաքիա վարդապետի և Թովմաս էֆէնտի Եսայեանի ուղերձներն առ Կ. Պոլսի Պատրիարքը, և իւր տուած պատասխանը։

Հայաստանի առաքելական եկեղեցին պարզած ունի միշտ իւր գիրկը իւր տարագնաց որդիների առաջ։ Ուստի միացածների ինքնայօժար վերադարձը հայրենի տունը իւրեանց հայրերի և եղբայրների մօտ անտարակոյս Վեհափառ Հայրապետի սիրտը ուրախացրեց։ Վեհափառ Տէրը Կ. Պոլսի Սրբ. Պատրիարքին օրհնեց և պատասխանեց խնամտալի կոնդակով, որ ահա կհրատարակենք, և արժ. Մաղաքիա վարդապետին ևս օրհնութեան յատուկ կոնդակ շնորհել բարեհաճեց, օրհնելով իւր հետ վերադարձողներին ևս։

Կշնորհաւորենք մեր հայրենատենչ եղբայրներին իւրեանց հայրենասէր վարմունքը։ Անկեղծ և սիրաբորբոք սրտով կմաղթենք երկնային Մեծ Վարդապետից, որ մեր ազգաշէն Վեհափառ Հայրապետիս աղօթքով աստուածային օրհնութիւնը իջնէ վերադարձողների վերայ, որ արժ. Մաղաքիա վարդ. Օրմանեանը Սուրբ Գրիգորի այգու մէջ մշակ առանց ամսթի և բոլոր վերադարձողներն Հայաստանի եկեղեցու հարազատ և հայրենասէր զաւակներ և հայրենական տան զարդեր հանդիսանան։

Սա է Վեհ. Հայրապետի Կոնդակն առ Կ. Պոլսի սրբ. Պատրիարքը։

Քաջարթուն Պատրիարքի Կոստանդնուպոլսոյ Գերազատիւ Տ. Ներսէս Սրբազան Արքեպիսկոպոսի Վարժապետեան յաւէտ սիրելոյ մերում և հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս խնդալ ի Տէր։

Արժանի յիշատակաց եղև դարս, յորում եմքս՝ մխիթարականօքն և բերկրանօք, որք մի զկնի միոյ յաջորդին։

Յայսպիսեաց է և վերադարձ Մաղաքիա շնորհունակ վարդապետի Օրմանեան հանդերձ քառասնիւ չափ պատուաւոր և լուսամիտ անդամօք ի Հակասունեան Հայոց պապականաց ի Հայաստանեայցս սուրբ եկեղեցի՝ համաձայն ներքին համոզմանց իւրեանց և բազմաժամանակեայ բաղձանացն՝ որպէս հաղորդէիք մեզ գրութեամբ Ձերով տողելով յիններորդի աւուր նոյեմբեր ամսոյ տարւոյս։ որ իրրև նշոյլ վերածութեան յազգային կեանս գուշակէ զբարեացառիթ արգասիս և ըղձալի է լինել յառաջընթաց կարապետ տակաւ միութեան այլոց անջատելոցն ի մէնջ և պանդխտացելոց յօտար փարախի։

Գոհ եմք զպատուականութենէ Ձերմէ, և բերկրեալ սրտի ւգովեմք զՁեզ, որ ըստ արժանւոյն սիրաշահեալ զնոսա պատուով և մեծարանօք ընկալեալ էք ի ծոց առաքելական եկեղեցւոյ մերոյ։

Յուսամք Տերամբ՝ զի վերադարձ նոցա խրախուսեսցէ և զայլս յորդւոց Հայկայ զհեռացեալսն, և խոհեմ՝ և զգուշաւոր ընթացիւք իւրեանց պատկեսցեն զցանկութիւն ջերմեռանդն զգացմանց և ջանից իւրեանց և մեր համայնիցս։

Յանձնեմք Ձեզ սիրելւոյդ մերում յատկապէս ողջունել զնոսա ի մերս

կողմանէ մատուցանելով ամենեցուն զսէր մեր և զօրհնութիւն Հայրապետական։

Մաղթելով և վասն Ձեր զերկնային օժանդակութիւն սրբոյ Հոգւոյն, աղօթս առնելք առ Աստուած, զի որ ի ձեռն Ձեր սկիզբն էառ՝ յաջողեսցէ ի բարին և ի կատարեալն։

Ամենայնիւ ընդ սմին զկոնդակ օրհնութեան ի պատասխանի թղթոյ Մաղաքիա վարդապետի Օրմանեան առ ի յանձնել ինքեան։

Ողջ լերուք զօրացեալ Տերամբ։

1879 դեկտ. 14. թ. 594։

***

Վեհափառ Հայրապետը անցած տարվան դեկտեմբեր և այս տարվան յունվար ամիսներում բարեհաճեց հետևեալ կոնդակներ շնորհել։

Կոնդակ Ցակ. Տէր Խաչատուրեանի, Մարտ. Արրահամեանի, Ստեփ. Մանուչարեանի և Թոմ. Շահրազեանի անունով, որով կհաստատէ նոցա Նուխում հոգևոր դպրոցի հոգաբարձութեան պաշտօնում։ Դեկտ. 2, № 577։

Կոնդակ օրհնութեան տիկին Թագուհի Արծրունուն, Նոր Բայազիտից, 200 ման. նուիրելու համար տեղական օրիորդական դպրոցին և մի ոսկեայ սկիհ Նորակաղաց Ս. Կարապետ եկեղեցուն։ Դեկտ. 4, № 579։

Կոնդակ Գեր. Գրիգոր Արքեպ. Մուշեղեանի անունով, որով նորա միջնորդութիւնը յարգելով կներէ Յովհաննէսեան քահանային։ Դեկտ. 11, № 591։

Կոնդակ Երևանի Կաթուղիկէ եկեղեցու ժողովրդի անունով, որով կշնորհէ նոցա Ս. Հռիփսիմէի նշխարների մասը, նոցա խնդրով, և կպատուիրէ ուխտի արդիւնքը իւրեանց դպրոցին յատկացնել։ Դեկտ. 13, № 592։

Կոնդակ օրհնութեան և պատասխան Գեր. Ներսէս Արքեպ. Կ. Պոլսի Պատրիարքի անունով, Մաղաքիա վարդ. Օրմանեանի վերադարձի համար մայրենի առաքելական եկեղեցու ծոցը։ Դեկտ. 14, № 594։

Կոնդակ օրհնութեան ի պատասխան Հպատակական թղթին Մաղաքիա վարդ. Օրմանեանի անունով իւր և իւր հետ վերադարձողների համար։ Դեկտ. 14, № 595։

Կոնդակ օրհնութեան մեծ. Դատուր խան Սեմխանեանի անունով կարևոր դէպքերում Ատրպատականի առաջնորդին աջակցելու համար։ Դեկտ. 28, № 628։

Կոնդակ Թոստոմ բէգ Լալայեանի, Պետրոս Կաճկաճեանի, Շահանգիւլ բէգ Մէլիք Շահնազարեանի և Ստեփ. բէգ Կեօքչէեանի անունով, որով կհաստատէ նոցա Շամախու հոգևոր դպրոցի հոգաբարձութեան պաշտօնում։ Օգնականներն են. Շահանշահ բէգ Վլասեան և Սահ. Գեանջեցեան։ Դեկտ. 28, № 629։

Գրութիւն առ Լեվ Սավվիչ Մակով ներքին գործերի նախարարն, որով կառաջարկէ Նոր Նախիջևանում հաստատված թեմական դպրանոցի համար կանոնադրութեան և արտօնութիւնների հիմնական ծրագիր Թագաւոր

Կայսերն հաստատել տալու համար։ Դեկտ. 28։ № 630։

Կոնդակ Խաչատուր ա. ք. Զարիֆեանի։ Մինաս Խալիպեանի։ Մինաս Բալարանեանի։ բժիշկ Գէորգ Տիգրանեանի։ բժիշկ Յովհաննէս Բէրբէրեանի և Յովհաննէս Խաթրանեանի անունով։ որով կհաստատէ նոցա Նոր Նախիջևանի հոգևոր դպրոցի Հոգաբարձութեան պաշտօնում։ Դեկտ. 31։ № 631։

Կոնդակ Գեր. Մելքիսեդեկ Եպիսկոպոսին Զմիւռնայի առաջնորդին։ որով կհաղորդէ որ իւր և տեղական ազգային վարչութեան ընտրութեան համաձայն կհաստատէ գանձապետութեան պաշտօնում Զմիւռնայում և վիճակում Էջմիածնի անունով մտած փողերի։ կտակների համար Ստեփանոս Վարպետեանին և կպատուիրէ աջակցել նորան։ հաստատել գանձանակներն վիճակի ամեն եկեղեցիներում և ամեն տարի ուղարկել արդիւնքը Էջմիածին Սինոդի ձեռով։ Յունվարի 20։ № 24։

Կոնդակ Զմիւռնացի Ստեփանոս Վարպետեանի անունով։ որով կհաստատէ նորան Էջմիածնի համար Գանձապետ գանձանակադրամներ։ կալուածներ։ կտակներ և այլն հոգալու համար Զմիւռնայում և բոլոր վիճակում և կպատուիրէ վարել իւր պաշտօնը Էջմիածնի Սինոդի հրահանգների համաձայն։ Յունվ. 20։ № 25։

Կոնդակ օրհնութեան և յորդորանքի Զմիւռնայի վիճակի ժողովրդին։ որով կծանուցանէ Ստեփանոս Վարպետեանին Էջմիածնի գործակալութեան և գանձապետութեան պաշտօնում հաստատելը։ Յունվ։ 20։ № 26։

Կոնդակ Արիստ. ա. ք. Բէնքլեանին։ Թիֆլիսի Ս. Գէորգ եկեղեցու միաբանին։ որով իրաւունք կշնորհէ նորան արծաթեայ ոսկեզօծ խաչ կրելու առ Էջմիածինն ցուցած հաւատարմութեան և Խորէն Վ. Ստեփանէին հանգանակութեան միջոցին աջակցելու համար։ Յունվ. 22։ № 27։

Կոնդակ որով կհաստատէ Ալեքսանդրօպոլի հոգևոր դպրոցի Հոգաբարձութեան պակասած նորընտիր երեք անդամներին։ Յունվ. 29։ № 36։

Կոնդակ օրհնութեան և շնորհակալութեան Պ. Անտոն Ղօրղանեանին 1000 մ. նուիրելու և յօգուտ ճեմարանի ննջարանի շինութեան նպաստաւաքութեան օգնելուն համար Խորէն վարդապետ Ստեփանէի հետ։ Փետր. 4։ № 45։

Կոնդակ օրհնութեան և շնորհակալութեան Պ. Յովհաննէս Զիթախեանին 1000 մ. նուիրելու և վերոյիշված օգնութեան համար։ Փետր. 4։ № 46։

Կոնդակ օրհնութեան և շնորհակալութեան Պ. Ալեքսանդր Մանթաշեանին 600 մ. նուիրելու և վերոյիշված օգնութեան համար։ Փետր. 4։ № 51։

Կոնդակ օրհնութեան և շնորհակալութեան Արգար Յովհաննիսեանուն իւր նուէրի և վերոյիշված օգնութեան համար։ Փետր. 4։ № 52։

Կոնդակ օրհնութեան Եսայի Փեթոյեանին 500 մ. նուիրելու համար։ Փետր. 4։ № 47։

Կոնդակ օրհնութեան Յարութիւն Քարտաշեանին 237 մ. արժողութեամբ ներքին փոխառ. տոմսակ նուիրելու համար ճեմարանին։ Փետր. 4։ № 48։

Կոնդակ օրհնութեան Գրիգոր Շիրոյեանին 300 մ. նուիրելու համար։ Փետր. 4։ № 49։

Կոնդակ օրհնութեան Երևանցի Ալեքսանդր Ն. Թայիրեանին 300 մ. նուիրելու համար։ Փետր. 4։ № 50։

Կոնդակ օրհնութեան Ալեքսանդր Մելիք Ազարեանին 300 մ. նուիրելու համար։ Փետր. 4։ № 53։

Կոնդակ օրհնութեան Ծովիանեան եղբայրներին 250 մ. նուիրելու համար։ Փետր. 4։ № 54։

Կոնդակ օրհնութեան Յովհաննես Էմինեանին 300 մ. նուիրելու համար։ Փետր. 4։ № 55։

Կոնդակ օրհնութեան և շնորհակալութեան ընդհանրապէս Թիֆլիսի ժողովրդին Ճեմարանի ննջարանի շինութեանը օգնելու և նպաստելու համար։ Փետր. 8։ № 64։

Կոնդակ Թիֆլիսի Աւետեաց եկեղեցու միաբան Գէորգ ք. Աբուլեանին, որով կշնորհէ նորան կամիլավկա կրելու իրաւունքը առ Էջմիածին ցոյց տուած հաւատարմութեան և Վեհ. Հայրապետի նուիրակ Խորէն Վ. Ստեփանէին ընձեռած գործակցութեան համար։ Փետր. 4։ № 56։

Կոնդակ Թիֆլիսի Կուկիայի Աստուածածնի եկեղեցու միաբան Եսայի ք. Տէր Նիկողոսեանին, որով կշնորհէ նորան արծաթեայ ոսկեզօծ խաչ կրելու իրաւունքը իւր առանձին ջերմեռանդութեան համար առ Ս. Էջմիածին, և Խորէն Վ. Ստեփանէին օգնելու համար։ Փետր. 4։ № 57։

Կոնդակ օրհնութեան և շնորհակալութեան Մկրտիչ Սանասարեանին յօգուտ Ճեմարանի 1500 մ. նուիրելու և նպաստահաւաքութեանն օգնելու համար։ Փետր. 8։ № 65։

***

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՃԻՌՆԵՐ։

Ի 15 հոկտեմբերի 1879 ամի։ Առարմամբ միոյ օրինակի խմբագրեալ ծրագրի հաստատելոյ ի Վեհափառ Հայրապետէ վասն ծխական դպրոցաց Հայոց, ի կողմանէ Սինոդիս հրամանագրել կառավարչի Թեմին Կարուց Գրիգորիս Եպիսկոպոսի Աղուանեան, հաստատեալ հեռագրական առաջադրութեան Նորին Սրբութեան, բանալ վերկսեռ ծխական դպրոցսն Հայոց Կարուց եւ շարունակել տալ զուսումն համաձայն այնմ ծրագրի, նոյնպէս բանալ հեագրեալ ծխական դպրոցս յամենայն գիւղօրայս վիճակին եւ զամենատեսակ տարեկան հաշիւս ցյառաջադիմութեանց աշակերտաց եւ զաւանդեալ առարկայից ուսմանցն մատուցանել Սինոդիս. եւ ի դէպս պահանջելոյ նահանգապետի տեղւոյն զոր եւ իցէ տեղեկութիւնս վերաբերմամբ ծխական դպրոցաց վիճակին յայտնել նորին գերազանցութեանն, զի նա զկարեւոր տեղեկութիւնս եւ զզրագրութիւնս զհոգեւոր ծխական դպրոցաց պահանջեսցէ ուղղակի ի Սինոդէն։

Ի 22 հոկտեմբերի 1879 ամի։ Հրամայեցաւ տալ լուծումն կոնսիստորիային Տփխիսու, վասն Ցոյլատրելոյ օգնականի երիցփոխանին Աւետեաց եկեղեցւոյն Տփխիսու, նո-